

ԲԷՃԱՅԻՆՆԵՐ ԿԱՍ ԲԱՐԻՉՍ՝

25. Մէիդ-Ալի-Մէհմէդը՝ Բարը մելանխոլիք բնաւորութիւն ունէր, նա անչափ սրամիտ և սաստիկ խորաքննին տեսողութիւն ունէր: Պատմում էր մայրը, քեռին, որ նա Սոկրատի նման առանձնացած, ժամերով հայեացքը մի կէտի վրայ յառած մտածում էր անթարթ, անշարժ և յանկարծակի սթափուելիս, չէր էլ զգում, թէ ինքը ժամերով անզգայ վիճակ է ունեցել: Մանուկ հասակից նա ենթակայ է եղել այսպիսի խորասուզումների և անվերջ, մինչև կեանքի վերջը շարունակել է այս մտադրադումները, երևակայութեամբ մի տար աշխարհ տեղափոխուած: Երկար ժամանակ նա մտքով թափառել է գտնելու, տեսնելու այն աշխարհը, ուր իբր ժամանակով առանձնացել է, ապրում է, ըստ շիական վարդապետութեան, իրենց վերջին իմամ՝ Մէհթին, որտեղից վերադառնալու է անաւոր սերունդով: Ինչպէս երևում է Քէրէլայի ուխտազնացութիւնը, Հաջի Մէիդ — Քէազիմ Միւջթէհիդը, սրա աշակերտների հետ ծանօթութիւնը շատ բարերար ներգործութիւն է ունեցել Բարի մտաւոր աշխարհի վրայ, որը առասպելական վերացական աշխարհից անդրադարձել է բնական աշխարհը: Աւելի ևս դրականապէս փոխուեց Բարի աշխարհայեացքը Մէքքէի սե-քարի ուխտից դառնալուց յետոյ, այնպէս որ նա որոշեց Իսլամի պարզութիւնից նախապաշարումների և մարդապաշտութիւնների մէջ խըրուած ժողովրդին իր անզգայութիւնից սթափեցնել և մի զարկ տալ դէպի առաջադիմութիւն: Նա իր այս կոչումի մասին մեծ հաւատ ունէր, նա համոզւած էր, որ ինքը աշխարհ է եկել, որ մարդկութիւնը սթափեցնէ և առաջնորդէ այն երանելի խղաղութեան վայրը, որին ձգտել և չեն հասել նախորդ մարդարէներն ու առաքեալները և մեծ յուսով սկսեց քարոզութիւնները, որը անչափ յաջողութիւնով առաջ տարաւ: Անչափ փաս-

տեր կան, որ Բաբը իր խօսակցի, ընկերակցի մտքերը կարգալու և յայտնելու մեծ ընդունակութիւն ունէր, մանաւանդ դիւթելու, կաշկանդելու: Այս բնատուր կարողութիւնը Աստուածային շնորհի մի հիւլէն համարելով, (Նուգդէի-Ուլահը) Աստուածութեան մի կէտը դաւանելով, նա վստահ ըարողից և նրան դաւանեցին հազարաւորներ: Բաբ-էլ-Բաբ Բիշրօյէցին երբ երեք-չորս օր կաշկանդուեց, չը կարողացաւ մզկիթում շուրթերը շարժել և դաս—բարոզ խօսել, նա մինչև մահ այդ պարագան բացատրում էր, իբր թէ մզկիթում իրենից բարձր հասկացողի, մտածողի և բացատրողի ներկայութիւնը նրան կարկամեցրել էր: Բաբի ազդու խօսքը այնքան մեծ հաւատ էր ներշնչում, որ նրա հետ վիճող իւլէմիները ոչ միայն անպայման դաւանում էին նրա յաստուածայօյտութիւնը, այլ մինչև անգամ բուժուում էին իրենց ախտերից: Այնքան վստահ և ոյժիղ կամը ունէր Բաբը, որ նրա առաջ ընկճուեցին, լոեցին ամենանշանաւոր գիտնական պարսիկները, նրան պաշտեցին իւր դարի մտքի ու գրչի ներկայացուցիչ հայրենակիցները Եփրատից մինչև Գանգէս: Նրա հայեացքը այնքան զօրաւոր էր, որ կաշկանդել էր պարսկական ամենախիզախ մեծամեծներին, որոնք իսպառ-մերժեցին Հաջ-Միրզա-Աղասիի մեծ վէզիրի հրամանները և չյանդգնեցան ձեռք բարձրացնելու անմեղի վրայ: Նա մի հայեացքով այնպէս դիւթեց արքունի սենեկապան Սիւլէման խանին, որ նա իւր պաշտելի Բաբին չուրանալու համար, աներևակայիլի քաջութեամբ մահի հետ կռուեցաւ: Բայց այս պարագաները դեռ ևս աւելի խոր ուսումնասիրութեան կարօտ լինելով, մենք չենք համարձակուում պնդելու, թողնելով ապագային նրանց ուսումնասիրութիւնը, մեր պատմութեան շարունակութեան անցնենք:

26. Թէև Բաբը մեռաւ, բայց Բաբիները գլխից օրէցօր նորանոր փորձանքներն անպակաս էր և ամբողջ Պարսկաստանում ամէն մի չարագործութեան հեղինակն ու դարանագործը: Բաբիներն էին համարուում. կաշառակուրծ պաշտօնականների, ագահ կղերի համար սրանից աւելի նպաստաւոր առիթ չէր կարող լինել: Ամէն ոճիր, ամէն յանցանք Ներոնի նման վերագրում էին նորաղանդներին և օրէցօր տանջանքները, դաժանութիւնները սաստկացնում: Հաջի-Սէիդ-Քեհազիմ միւլթէհի-դի ամենանշանաւոր աշակերտուհին էր Զահրէ-խանումը, որին շէխիների վարդապետը «Նուրէթ-ուլ-էյն» (աչքի լոյս) տիտղոսն էր տուել, նորա անչափ տաղանդի, սուր յիշողութեան և պայծառ դատողութեան ու տեսութեան համար: Զահրէ-խանու-

մը իւր գիտութիւնով և աստուածաբանական մեկնութիւններով ամբողջ շիա կղերի համարումն էր վայելում, ինչպէս Իրանում, նոյնպէս Իրակ-արաբում: Հետեւելով իւր բարոնապետին նա աստուածաբանական լէկցիաներ էր կարգում Քէրբէլայում հարիւրաւոր ունկնդիր ուսանողներին (թալաբա), որի համար վերջինների երկրպագութեանն էր արժանացած: Զահրէ-խանումը գրաւած համարումի, դիրքի պատճառով մասնուել էր և Օսմանեան Բ. Դունից հրաման էր արձակել, նորան պետութեան սահմաններից հեռացնելու:

Երբ Զահրէ խանումը Քէրբէլայից թէհրան էր գնում լէկցիաները շարունակելու, նորա հայրը՝ Մոլլա-Սալէհ Ղազվի-նի միւշթէհիդը չը թողեց, որ աղջիկը ուղղակի նպատակին դիմէ, ճանապարհից տուն դարձրեց: Հայրական յարկի տակ Բահրէ-խանումը անվերջ ընդհարում էր հօր, հօրեղբօր և եղբայրների հետ, որոնք բոլորը մոլի միւթէշարի էին, իսկ ինքը միակ՝ շէյխի: Նա, որ ամուսնացած էր մանուկ հասակից հօրեղբօր որդու հետ, չէր սիրում, չէր համակրում ամուսնին և բաժան էին ապրում: Այս վիճակում հայրական յարկը դժոխքից ծանր ներգործութիւն ունէր նորա հոգու վրայ, որի մտքի թռիչքները սաւառնում էին լեռների ամպերի վրայով...: Այս տխրութեան օրերին Զահրէի միւթարութիւնը միայն ընթերցանութեան մէջն էր, նա ընթերցանութեան նիւթ շատ էր ստանում իւր ընկերակիցներից, աշակերտներից և համակրողներից, որոնք սիրուած էին Իրանում, Թուրանում և Տիգրիսի ափերի սրբավայրերում: Այս գրութիւններով նա ծանօթացաւ Բաբի վարդապետութեան հետ, ձեռք բերեց նրա բոլոր գրութիւնները, ուսումնասիրեց և դարձաւ Բաբի անձնուէր երկրպագող: Զահրէ-խանումը տեսել էր Քէրբէլայում այդ երիտասարդ քարոզչին, բայց այնքան չէին մտերմացել: Երբ Բիշրօյէցին Մաղանդարանից գնում էր Շիրազ Բաբին այցելելու, Զահրէ-խանումը նրան յանձնեց իւր գրաւոր դաւանանքը, որ տանի հասցնի նոր-մարգարէին և ինքն սկսեց եռանդով քարոզել Բաբի վարդապետութիւնը: Նա շուտով նամակի պատասխանը Բաբից ստացաւ, որով նորա անունը փոխում «Թահիրէ» (Մաքրուհի- ճոխուհի) է կանչում, որից յետոյ այնպէս մտերմացան, որ շարունակ թղթակցում էին: Թահիրէի գրութիւնները, մանաւանդ չափական-բանաստեղծական երկերը մինչև այսօր մեծ հաճոյքով կարդումն են ոչ միայն բաբիները, նոյն իսկ շիաները, որոնք հիպնոսում են ընթերցողին, սքանչացնում և նրան մտքով երկրային դրախտն առաջնորդում:

27. Այս քարոզութիւնները Թահիրէի արիւնակիցներէ հետ
ունեցած յարաբերութիւնը բոլորովին լարեցին, այնպէս որ
նրանք բորբոքուած հերոսունիի դէմ, այնպէս ռիսակալած նո-
րան հայոյումէին, որ Թշուառ Թահիրէն չէր իմանում ինչ
հնարքով գլուխը փրկել հայրական որջից: Թահիրէի հայրը
այնպէս էր բորբոքուած աղջկայ դէմ, որ ամեն առթիւ կրկ-
նում էր. — Միթէ քո աստիճանդ այդտեղ է, որ դու, քո այդ հաս-
կացողութեամբ ու կատարելութեամբ այնքան ստորանաս, որ
գնաս խաբուես մի տգէտի լեզուից, նրան գերադոյն յայտնու-
թիւն դաւանես, խոստովանես, որ նա նախասահմանուած մէ-
թին է....: Այդ դու որքան մտքով կուրացար, որ խոր անդունդը
գլորուեցար: Սթէ դու ինքդ մարգարէանալու ձգտէիր, քո անձը
մէնթի հրատարակէիր, ես խոնարհած քեզ երկրպագութեան
կգայի սիրով և քո մունետիկը կդառնայի, աշխարհին կքարո-
ղէի քո մտքերը: Իսկ դու, առանց աստիճանդ կշռելու, եր-
կրպագում ես մի տգէտ ստախօսի-դրպարտչի, որը քո աշա-
կերտների ձեռքերին շուր տալու արժանաւորութիւն չունի:

Այդ միջոցներին մի օր քարոզի մէջ Մուլա-Թաղին, Թա-
հիրէի հօրեղբայր—սկեսրարը հայոյէր յայտնի Շէխ-Ահմէդ
Բահրէնիին: Փարոզին ներկայ է լինում մի Շիրազցի, առանձ-
նութեան մէջ բացատրութիւն է պահանջում հայոյողից: Երբ
վերջինս առանց բացատրութեան կրկին հայոյում է, Շիրազցի
երիտասարդը դարան մտնելով սպանեց Մուլա-Թաղին: Չարա-
գործութիւնը վերագրելով Թահիրէին ու նորա մտերիմ երեք
մուլայի, Ղազվինին դատաւորին ստիպեցին սրանց կալանաւո-
րել, տանջելով խոստովանեցնել: Ոճրագործը նկատելով, որ
իւր փոխարէն անմեղներին են տանջում, ներկայանում է դա-
տաւորին, անձնատուր է լինում խոստովանելով մեղքը, փաս-
տերով էլ ապացուցանում է, թէ ինքն է չարագործը և բացա-
տրում է պատճառները: Ղազվինի կառավարիչը միւլթէհիդի և
մեհնողի որդիների Թախանձանքից ստիպուած ոճրագործին,
Թահիրէի և երեք մտերիմ իւլէմների հետ ուղարկում է Թէհրան,
Հաջի Միրզա-Ագասի՝ վէզիրին: Այդտեղ չարագործը բանտից
փախչում է, երեք իւլէմները զոհ են գնում զրպարտողների մե-
քենայութիւններին, քանի որ չեն գիշանում Բաբին ուրանալ,
իսկ Թահիրէին յանձնում են իւր տան մէջ արգելելու:

28. Թահիրէն իւր քարոզութիւններով այնպէս համբաւ
վաստակեց, որ ամբողջ Թէհրանի մտքի և գրչի ներայացու-
ցիչները, նշանաւոր պաշտօնականները հիանում ու յափշտակ-
ւում էին նորա տաղանդով: Թահիրէն հետեւելով Բաբին քարո-

զույժ էր միակնութիւն, հաւասարութիւն երկու սեռի մէջ, քօղի ջնջում, սիրոյ ամուսնութիւն, կրքերի սանձում, ազգերի, ցեղերի, կրօնների անխտրութիւն և եղբայրութիւն համայն մարդկութեան: Նա առաջինն էր, որ եղծեց ծովը, աւելորդ ծէսերը, օրական հինգ անգամի աղօթքը, աւելորդապաշտութիւնները, որոնք գոյութիւն ունեն իսլամի վարդապետութիւնով և քարոզեց համարձակ իրեն հետեւել: Նա, որ մի ժամանակ Գէրբէլայում վարագոյրի ետեւից էր խօսում իւր ճառերը թալարաներին, քօն ու չարսաւը պատառելով համարձակ բարձրանում էր ամբիոն, հերարձակ և բաց կրծքով, քարոզում էր հաւաքուած երկսեռ Բաբիններին իւր խրոխտ և հուժկու որոտով, ազդու ոճով, քաղցր ձայնով և զրաւիչ շարժումներով, որ սթափուին դարեւոր քնէածութիւնից, պատռեն խաւարի վարագոյրը և դիմեն յառաջագիմութեան: Նա առանց յոգնելու ժամերով խօսում էր, համեմելով իւր քարոզները սեփական բանաստեղծական ոտանաւորներով, որոնք այնտեղ անգիր էին անում, զրի անցնում և տարածում: Իսկ ունկնդիրները հիացմունքից արձանացած, առանց ծպտիւնի, ջանում էին լսել, ըմբռնել և իւրացնել այդ լոյսի քարոզչուհու գաղափարները: Դարեւր և անչափ դարեր էր անցել Արիական աշխարհի վրայից, մարդիկ կնոջ դէմքը միայն կանանոցում էին տեսել և յանկարծ բնաւ վրայից Թահիրէի նման մի չքնադից, բայց աւելի սքանչելի ճարտասանի խօսքերից ու մտքերից թովումած, կեանքերը վտանգի մատնած շրջապատում էին նորան, որպէսզի իրենց հոգեկան ծարաւը յագեցնեն, մխիթարուին և յուսադրուին մի այնպիսի երանելի ապագայով, որը նրանց անչափ մօտ էր թւում: Թայց տարաբաղտաբար երկու տարի էլ չտեւց Թահիրէի քարոզութիւնները, յանկարծ մթնեց Թէհրանի հորիզօնը և զարհուրելի տեսարանները ահաբեկեցին ու ցրուեցին այս ժողովներին յաճախողներից շատերին:

29. Բաբի չարաչար նահատակութիւնից անչափ բորբոքուած ու զգացուած նրա ծառան, իսկուեցի մի թուրք՝ Սադգանունով, վրեժխնդիր եղաւ և Թէհրանում Նասրէդդին Շահի վրայ ատրճանակ արձակեց 1852 թ.: Թէն շահը թեթեւ վնասուեց, քանի որ ցնորամիտ Սադգը միայն դնդիկներով ու վառօդով էր լցրել իւր ատրճանակը, բայց երբ ըմբռնեցին, որ չարագործը Բաբի է և վրեժխնդրութեան հոգով էր կատարել այդ ոճիրը, սկսեցին սարսափելի կերպով հալածել նորադանդներին: Այս միջոցին մի ինչ որ խոհարարի քաջալաւջկերտի մատնութիւններով ու ցուցումներով Թէհրանի ոստիկանութիւնը

սկսեց կալանաւորել պատահած մարդու և լքցրին բանտերը: Մայրաքաղաքի խորքերը, ներքնատները թափնուած Բաբինք-
րին խուժը խուժը կալանաւորուած և տանջուած էին, որ խոստո-
վանին ու մատնին իրենց առաջնորդներին: Տանջանքից ազատ-
ուած էին միայն նրանք, որոնք հայհոյուած էին Բաբին և նրա վար-
դապետութիւնը, կամ նրանք, որոնք լքցնուած էին դահիճների-
դատաւորների գրպանները, իսկ մնացեալներին ենթարկուած էին
զարհուրելի տանջանքներ: Առաջին օրերին մի ժողովուած ձեր-
բակալուած 38 հոգուց միայն եօթը մարդ չուրացան Բաբին
ու հաստատ մնացին իրենց դաւանանքի վրայ, մերժելով թա-
խանձանք, խոստուած, սպառնալիք, հերոսաբար վզերը մեկնե-
ցին դահիճներին: Սրանցից մին Բաբի խնամակալ քեռին՝ Մէ-
իդ Ալին էր, 70 տարուան ալեւոր, որին ազատելու համար
թէ և 300 թուման խոստացան շիա վաճառականները, որպէս
զի Մէիդի արիւնը չըմնայ իրենց վզին, բայց որովհետև հաստա-
տամիտ ծերուկը չուրացաւ հաւատքը, զարհուրելի տանջանքով
զլխատուեցաւ Երկրորդը Թուրքիչի միւլթէհիդն էր, երրորդը
Ղումի միւլթէհիդը, չորրորդը Քիրմանի միւլթէհիդը, հինգերոր-
դը մայր-Թագուհիի աղօթարարը, վեցերորդը Թաւրիզեցի յայ-
տնի վաճառական, որոնք բոլորը հերոսաբար զոհուեցան իրենց
գաղափարի համար: Եօթերորդը մի դեռահաս և շատ գեղեցիկ
երիտասարդ էր, Մարաղացի սէիդ, որին ի՞նչ խոստումներ ա-
րին, փող, թոշակ, պաշտօն, պալատի մինիստրի աղջիկը, բայց
չկարողացան համոզել, նա անվրդով կարգաց Բաբի անունը,
նրա աղօթքը և ուրախութեամբ գլուխը յանձնեց դահիճին:

30. Չարհուրելի, արեւելքին յատուկ ինկվիզիցիական տան-
ջանքներ տուեց Հաջի Սիւլէյման-խանին: Երբ այս պալատա-
կան սենեկապանը համարձակ խոստովանեց իւր դաւանանքը,
հերոսաբար արհամարհեց դահիճների սպառնալիքը, ծաղրեց
բռնութեան ոյժը, հակառակդողների զօրութիւնը, առարկեց,
թէ ո՛չ ոք իրաւունք չունի բռնանալու իւր հոգեկան զգացում-
ների, կրօնական հայեացքների դէմ, նրան մերկացրին, ձաղ-
կեցին, մրտեցին ամբողջ մարմինը, ծակոտեցին խշտիկներով
մկանները, ծակերի մէջ մոմեր խրեցին և վառեցին, իշի վրայ
նստեցրած Թէհրանի փողոցներում մանածեցին, մոնետիկով և
դահուլ-զուբնայով: Այս հրէշային տանջանքներին մատնուած
Հաջի Սուլէյման խանը առանց հառաչելու, առանց տրտնջալու,
առանց վհատելու, սոսկալու առաջ էր գնում, երբեմն երբեմն
իշից ցած գալով, մարմնից վար թափուած մոմերը կրկին
խրում էր մաի մէջ արիւնժեր վէրքերում, պարելով, ցատկոտե-

լով անցնում հրապարակները հարսանեկան թագուրի նման հրճուանքով ու բերկրալի։ Ամբողջ Թէհրանը փողոցները դուրս թափուած դիտում էր տեսարանը, մարդիկ չէին ըմբռնում, թէ ի՜նչն էր ստիպում Հաջի-Սիւլէյման-խանին արհամարհել փառքը, հարստութիւնը, կարողութիւնը, աստիճանը, դիրքը, թո՛ւակը, ընտանիքը և զաւակները, և յանձն առնել այս զարհուրելի կսկիծներն ու մորմոքները մի ինչոր նոր վարդապետի դառանցանքների համար։ Վերջապէս Հաջի-Սիւլէյման-խանը ինքը համարձակ պարզեց իւր թևերը, սրունքները դահիճներին, որոնք անգութ սպանդների նման մաս մաս կտրտեցին-թափե-շին նրա անդամները և ապա կտրտեցին դուխը.....

Հաջի-Սուլէյման-խանի ընթացքը օրինակելի դարձաւ Բաբիններին, որոնք աւելի անվեհեր անձնատուր էին լինում դադափարի կռուին։

Այս տխուր օրերին շահի յատուկ հրամանով դահիճները ներկայացան Թահիրէին խեղդելու։ Հերոսուհին առանց տատանւելու դահից չուանը առաւ, հանգուստեց, գցեց վիզը և ծայրերը նրբանցքում սպասող դահիճներին տալով հրամայեց որ քաշեն..... մինչև որ խեղուած թաւալուեց.....

31. Մի ուրիշ խմբի Բաբիններին, ձօտ 370 հոգու, դատաւորները բաժանեցին Թէհրանի ժողովրդին՝ էսնաֆի ամեն մի դասին, մաադործներին, դարբիններին, դերձակներին, հիւաներին, սափրիչներին, բաղնիսպաններին, որմնադիրներին, քանքաններին, բէզազներին, սեղանաւորներին, ոսկերիչներին, ածխավաճառներին, կաղմարաքներին, ներկարանրերին, մոլլաներին, թաւաբաններին, ֆարաշներին, ներքինիներին, մինչև անգամ պալատական աղախիներին, որպէսզի ամէն մի արհեստաւորի դասը խորհուրդ անեն իրենց մէջ, իրենց արհեստին յատուկ գործիքներով տանջանքներ խորհին, տանջեն, չարչարեն և սպանեն այդ ուրացողներին։ Ամբողջ մի շաբաթ Թէհրանի թաղերին տիրել էր վայնասուճը, փողոցները ողողուել էր անմեղների արիւնով, ապականութեան հոտը ամբողջ ամսով շմեցրել էր ամբոխին, դահիճները ուժասպառ էին եղել, իսկ Բաբինները նորանոր ոգևորութեամբ շարունակում էին իրենց բարոզութիւնները, դահիճներին վզերը պարզելով..... Այն պարսիկները, որոնք համար մարդասպանութիւնից մեծ ոճիր չկայ աշխարհում, որոնք մարդու մահուան պատճառ դարձողին, դահիճներին. և մարդասպաններին «պունկորդի» են կանչում, բթացել էին, զգացմունքները բարացել էին, չէին խնայում ոչ ծերին, ոչ մանուկին, ոչ արուին, ոչ էգին, ոչ էլ բալուլի

ծծկերին, հարազատին թէ խորդին, հեղեղում էին, արիւնը հոսեցնում շատրուանի նման և հրճւում..... Իսկ թէ Ինչպէս էին կեղեքում, կողոպտում Բաբիններին, կամ որպէս Բաբի մասնուածներին, չի կարելի նկարագրել.....:

32. Նահանգական վարչութիւններէից ամէն օր նորանոր խումբեր էին հասնում Թէհրան, ամէն մի կառավարիչ, պաշտօնական, Ֆարաշ շատ ընդարձակ արտօնութիւններով էր օգտւում կալանաւորելու, կողոպտելու, տանջելու իրաւունքից և վայն ու կոծը տարածել էին Իրանի ամէն կողմը: Այս կալանաւորների խմբերի հետ Աֆշէ գիւղից Շիրման ամառանոցի բանակն հասաւ նախկին վէզիրի Մալիէ (Ֆինանսի-մինիստր) Աղա-Բուզուրգի-Աբասի հրկրորդ որդին՝ Միրզա Հիւսէին-ալին, որն ամբողջ Թէհրանի նորաղանդներին յայտնի էր, որպէս Բաբի նախանձախնդիր հետևող: Աղա-Բուզուրգը Մազանդարանի Նուր գիւղիցն էր, որը գտնւում է Դիմաւէնդի լանջերի վրայ և այս կալուածքը ժառանգել էր ծնողներից: Տոհմով սրանք ազնուական էին, անուանի գերդաստան ամբողջ Պարսկաստանում: Աղա Բուզուրգը Զիլի-Սուլթանի ապստամբութեան և Ռուսաստան փախստեան ժամանակ ընկերակցելով, վերջը անցել էր Տաճկաստան և Բաղդադ էր ապաստանել, որտեղ էլ մեռաւ: Թէքէրսի կողու ժամանակ, երբ Բաբինները խմբով գնում էին Բարֆրուշից Բաբէլ-բաբին օգնելու, Հիւսէյն-Ալին առաջին անգամ այնտեղ դարձեալ կալանաւորուած էր, բայց շնորհիւ իւր ծագման ազատ էր թողնուած: Իսկ այս անգամ արդէն դիրքն ու տոհմը նրան չէին փրկել խստապահանջ և ընչաքաղց դահիճների ճանկից, որին Շիրմանում քննելուց յետոյ, տարին և Թէհրանում գլորեցին արքունի խոնաւ գնդանը:

Երբ ամէն կողմ կալանաւորումներն սկսուել էին, Հիւսէյն-Ալիի փոքր եղբայրը՝ Միրզա Նահան, որին Բաբը «Սուփ-էզ-էլ» էր անուանել, որը մեծացել էր մեծ եղբօր հովանու տակ և նրա հետ յաճախել էր միշտ Բաբիական ժողովներն ու միտինգները, դէշվիշի տարազ հագաւ, քէշքիւլը ձեռքը Արաղստանից թափառելով գնաց Րէշտ, գլուխը փրկեց: Այդ տարագով նա աներկիւղ թափառում, մտնում էր ժողովրդի բոլոր խաւերը և քարոզում նոր վարդապետութիւնը բռնաւորների թթի տակ, նրանց ներկայութեան, որոնք առանց մի բան ըմբռնելու դեռ ողորմութիւն էլ էին տալիս և դիւբացնում, որ նա տարածի իւր քարոզութիւնները:

Սագգի գործի քննութիւնը երիտասարդ շահը իւր ներկայութեանն էր կատարել տալիս, շատ մանրամասնութիւնների

էր հետամտում և անմեղներին ազատում էր տանջանքից, Միրզա-Հիւսէյն-Ալին շահի ներկայութեան այնպէս համարձակ և այնպիսի ազդու ոճով պաշտպանուեց, որ շահը համոզուեց, թէ նա մասնակցութիւն չի ունեցել չարագործի անմիտ արարքում: Մանաւանդ Ռուսական դեսպանի թախանձանքից էլ զիջած, ազատեց և թոյլատրեց Բաղդադ ուխտի գնալու: Պարսիկ պաշտօնեաներ Ռուսական դեսպանատան սպասաւորներին հետ Հիւսէյն-ալին տարին Բաղդադ: Բայց սրանից յափշտակուած գոյքը, կալուածքները, կարողութիւնը կու տուին պաշտօնեաները:

33. Էգէլին երբ լսեց եղբոր Բաղդադ գնալը, շտապեց նրան գտաւ, որտեղ միասին ապրում էին շրջապատուած Բաբի երկրպագուներով, որոնք հալածուած Պարսկաստանի այլևայլ գաւառներից խմբոււմ էին սրանց շուրջը, 1853 թ. Հիւսէյն-ալին դեռևս ծածկուած էր պահում իւր անձնաւորութիւնը, մտքերը եղբոր միջոցով էր արտայայտում հետևորդներին, կամ նրա անունից էր խօսում մտերիմներին, որոնց թիւը օրէցօր աճում էր: Էգէլին յափշտակուած Բաբի նրա հասցէին տղած պատգամներով, ամփոփուած երևակայութեամբ, իր անձը համարում էր նոր-մարգարէի «Մէրաթը» (հայելին) և նրա աւանդութեան Վէսին» (խնամակալը): Սա չունենալով ոչ ճարտար լեզու, ոչ էլ համարձակութիւն, զուրկ լինելով բարձր կրթութիւնից, մտաւոր կարողութիւնից, ծպտել էր համեստութեան շապիկով, բաւականացել էր դէրվիշական տարազով, թափառում էր քաղաքից քաղաք, երկրից երկիր և քարոզում Բաբի մտքերը: Բայց և այնպէս չէր էլ կարողանում Բաբի հետևորդներին առաջնորդելու յաւակնութիւնից ձեռք քաշել, թէև այս բանը չէր էլ համարձակուում դրականապէս արտայայտել: Այս տենչանքով, երբ Էգէլին, գինովցած իւր երևակայութիւններով, ամուսնացաւ Բաբի այրիի հետ, անչափ վրդովեց Հիւսէյն-ալին, որը չկարողանալով զայրոյթը զսպել չարաչար նախատեց եղբօրը ասելով.— «Միթէ զաւակը կարող է ամուսնանալ հօր կնոջ հետ: Եթէ դա քու հարազատ, քեզ ծնող մայրդ չէր, քո հօր, ամբողջ համայնքի հօր կողակիցն էր, ինչպէս յանգձնեցար նրան կին առնելու...: Դեռ Թէհրան եղած միջոցին, երբ դեռ չէին կատարուել Թէհրանի, Պարսկաստանի անգթութիւններն ու կոտորածները, Հիւսէյն-ալին թղթակցութիւն և խիստ մտերմութիւն ունէր Բաբի հետ, բայց չմատնուելու և չտուժելու նպատակով այնպէս էին կարգադրել, որ բոլոր յարաբերութիւնները կատարուի Միրզա Նահաի՝ Էգէլի անունով, որը դեռ շատ

դեռահաս էր և չէր կարող կասկածանքի առիթ դառնալ: Բարը իւր թղթերն ու կտակն անգամ երկու աշակերտների ձեռքով հասցրեց Հիւսէյն-ալիին, որը ոչ միայն աւանդապահ էր Բաբիվի այդ գանձին, այլ պիտի ղեկավարէր համայնքը:

34. Հիւսէյն-ալին Բաղդադում մի քանի տարի ապրեց իւրայինների շրջանում, քարոզեց, կառավարեց և յարաբերութիւն հաստատեց ամբողջ Իրանում սփռուած համայնքի հետ, որոնք սարսափները անցնելուց յետոյ, նորից կազմակերպութիւնները հաստատեցին և շարունակեցին իրենց քարոզութիւնները: Այստեղ 1854 թ. Հիւսէյն-ալին Բաբի քեռիի առաջարկութեամբ գրեց իւր առաջին երկը «Իգան», որով բացատրում էր Բաբի վարդապետութեան չը պարզուած կէտերը: Բայց որովհետև նա շրջապատուած էր ահաւոր հետևողներով, որոնք նրան միջոց չէին տալիս լրջութեամբ զբաղուելու, վարդապետութեան ոգին իւրացնելու և հիմնադրելու, Հիւսէյն-ալին ծպտեալ հեռացաւ Բաղդադից, անհետացաւ իւրայինների համար, դիմեց դէպի հիւսիս, Կորդուաց երկրի Մուլէյմանիէ քաղաքի մօտերը մի լեռնային աւան քաշուեց, Սերգելու, ուր ամբողջ երկու տարի առանձնութեան մէջ անցկացրեց օրերը: Վերջապէս Մուլէյմանիէի բնիկները ծանօթանալով նրա գործերի, քարոզութիւնների, վարքի, բարքի հետ, եկան Սերգելու շրջապատեցին և տարան Մուլէյմանիէ, որտեղ Սիւննի կղերը յափշտակուած էր նրա աստուածաբանական հմտութեան, ճարտար լեզուի, սքանչելի ուժով արտայայտութիւնների վրայ: Այս լուրը Բաղդադ հասնելու պէս բաբիները պատգամաւորներ ուղարկեցին և նրան վերադարձին արքայիսներէ աւերակ մայրաքաղաքը:

Մինչ այս Բաբի Բէյանների պատուիրանները պահպանում էին Բաբիները, եռանդով ուսումնասիրում նրա գրութիւնները, ջանում էին իւրացնել նրա քարոզները, բայց դեռ որոշ կարգեր չէին սահմանուած, ժողովրդի պարտականութիւնները չէր բացատրուած ու գործադրուած: Պարզ չէր, թէ Իսլամի վարդապետութիւնից որը պիտի պահպանուէր, և որը պիտի եղծուէր: Բարը, բիշրօյեցին, Հէօջաթը, Թահիրէն ջնջել էին ծովը, հինգ անգամի աղօթքը, քօղը, բազմակնութիւնը, թլփատութիւնը, լուացումը, բայց դեռ շատ բաներ անորոշ էր, իսկ բէյանների մէջ, կամ ուրիշ գրութիւններում որոշ բաներ չէին գտնուած: Հիւսէյն-ալին սկսեց բացատրել և բարեկարգել կարեւորները: Բայց նա դարձեալ իւր անձնաւորութիւնը չլիտանգելու համար խօսում էր եղբօր անունով, կամ նրա բերանով: Բաբի վարդապետութիւնը ամբողջապէս սահմանաւորուած էր մարդկային

մտքի ազատութեան, զարգացման, սթափման, գաղափարի արծարծման և տարածման շուրջը, բայց այնքան անորոշ, այնպիսի սաղմային վիճակում, որ Հիւսէյն-ալիի նման մի հմուտ մտքի կարիքը կար, որ դրանք որոշ դերք առնէին, պարզուէին, դիւրըմբռնելի դառնային ժողովրդի ամէն մի դասի համար: Բարի գրուածները ամփոփում էին հանրամարդկային սիրոյ, համերաշխութեան, եղբայրութեան, հաւասարութեան, պատերազմների, արիւնհեղութիւնների դադարման, զինուորականութեան ջնջման, բռնութեան սանձման, հոգեկան զգացումների—խօսքի, մտքի, գրութեան կաշկանդումների անհետացման, մարդկային ազատութեան և անհատի անկախութեան անհրաժեշտութիւններու: Նա հերքում էր իսլամի պարզութեան մէջ մտցրած բոլոր անոտիապաշտութիւնները, որոնք ճհաղիսներով՝ (մեկնութիւն-գերբնական ներշնչումով յաւելուած) ներմուծուել և աւելորդապաշտութիւններով շրջանակաւորել էին հետևորդների մտաւոր աշխարհը, ուղեփակներ էին սահմանել մտքի տարածումների, սլացումների առաջ: Հետեւելով Բարին, Հիւսէյն Ալին հերքում էր այն բոլոր միսթիքական առասպելները, որոնցով իմամ-Ալին և սրա ժառանգները՝ տասն երկու իմամները իրենց անձնաւորութիւնները կապել էին գերագոյնի հետ և զառանցական տեսիլների արձանագրութիւններով խճողել էին շլակաւ գիցաբանական օրէնսդրութիւնը: Բարը քարոզել էր և բէհան պարզում էր, որ Աստուծոյ շունչը—խօսքը—ղուրանը ճշ բացատրութեան, ճշ մեկնութեան, ճշ էլ եօթանասունը երկու տեսակ նշանակութեան կարիք ունին: Ղուրանը խնամակալի (վէսի) և բացայայտիչի (միւրէյին) պէտք չունի: Բայց որովհետև Ղուրանը ժամանակի ոգուն չի համապատասխանում, ուստի նոր-յայտնութիւնով Ալլահը նոր օրէնքներ է սահմանում մարդկային ազգի համար:

Բարի պատուիրանների գործադրութեան, կատարման համար Հիւսէյն-Ալին պահանջում էր հետևորդներից սիրել մինչև անպամ դահիճներին, բռնակալներին, յորդորում էր անսահման համբերութիւնով, զոհողութիւններով ընկճել թշնամիներին, դաժան կեղեքիչներին համոզմունքով և բարեգործութիւններով, յաղթահարել, հարստահարողներին ամբողջ գոյքը յանձնելով անվերջ նպաստներով և օգնութիւններով բարութեան լոյսը ծագեցնել ապառաժած սրտերում, անզգայացած-բթացած շղերում— Զեր միակ զէնքը, ասում էր, ձեր լեզուն և ձեր գաղափարը պիտի լինի:

ԱՏՐՊԵՏ

(Գը շարունակուի)